ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2021» ՄՐՑԱՇԱՐ

25.05.2021 16:53

Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը ս. թ. **մայիսի 27-ին՝** հինգշաբթի, ժամը 18:00-ին կազմակերպում է «**Փաստաբանների շախմատի գավաթ 2021»** մրցաշար**:**

Մրցաշարը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 4-րդ հարկում (հասցե՝ ք. Երևան Ջաքյան 7-2):

Շախմատի մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանները (արտոնագրի գործողությունը չկասեցրած) և «Փաստաբանական դպրոցի» ունկնդիրները: Մասնակցության համար խնդրում ենք գրանցվել մինչև սույն թվականի **մայիսի 26-ը՝** զանգահարելով 010 600 701 հեռախոսահամարին և հայտնելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները, կամ այդ մասին տեղեկացնել էլեկտրոնային փոստով՝ հետադարձ հաղորդագրությամբ:

1-ից 4-րդ տեղերը կպարգևատրվեն պատվոգրերով և մեդալներով:

Մրցաշարից հետո լավագույն խաղացողներից կձևավորվի ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը, որը սույն թվականի **մայիսի 29-ին՝** ժամը 11:00-ին կմասնակցի Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և ակադեմիայի կողմից կազմակերպված **Հայաստանի կորպորացիաների միջև անց կացվող գրան-պրի մրցաշարին** Հայաստանի շախմատի ակադեմիայում /հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34/:

ՀՀ փաստաբանների պալատի

մարզամշակութային ակումբի

ղեկավար՝ Վրեժ Խաչիկյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })